Քանի՞ թիւ կողեկացն, Քանի՞ թիւ խոռանացն,
Քանի՞ թիւ կամարացն, քանի՞ թիւ կանթեղացն,
Քանի՞ թիւ վարագուրացն, եւ քանի՞ թիւ զանգակացն·
Հազա՛ր թիւ կոզակացն, հազա՛ր թիւ խոռանացն,
Հազա՛ր թիւ կամարացն, հազա՛ր թիւ կանթեղացն,
Հազա՛ր թիւ վարագուրացն, եւ բիւր մի զանգակացն:

Տաճարն այն ո՞ւմ նըման է, աճառքն այն ո՞ւմ նըման է,
Մարդակքն այն ո՞ւմ նըման է, գերանքն այն ո՞ւմ նըման է,
Խոյակքն այն ո՞ւմ նըման է, սիւներն այն ո՞ւմ նըման է,
Խարիսխքն այն ո՞ւմ նըման է, եւ տաճարն այն ո՞ւմ վայել է:

Աճառքն մարտիրոսացն, մարդակքն մարգարէիցն,
Գերանքն քերովբէիցն, խոյակքն առաքելոցն,
Սիւներն սերովբէիցն, խարիսխն արքայ Կուսին,
Տաճարն վայել է Փրկչին:

Քարշէին ըզլարն, հընչէին զանգակքն,
Դըղրդայր տաճարն, ճոխայր ճախարակքն
Ցընծայր Սողոմոն արքայն·
Եւ երգս ի բարձունս երգէին նուագելով
Եւ գոչէին ասելով՝ Ալելուիա՛: